THE
DICKRIS PUBLISHING CO.
628 Third Avenue,
NEW YORK CITY.

ՏԻԳՐԻՍԻ ՍԻՒՆԱԿՆԵՐԸ ԲԱՑ ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՋԵՒ։

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 35 — ՆԻՒ ԵՈՐՔ, ՇԱԲԱԹ, ՅՈՒԼԻՍ, 9 1898 — ԳԻՆ 3 ՍԷՆԹ

ՄԵԾ ԱՐԿԱԾ ՈՒ ՄԱՀԱԳՈՅԺ

Գաղղիական Լա Պուրկոյն մեծ շոգենաւը, որ անցեալ Շաբաթ օր 548 ճամբորդներով և 222 նաւաստիներով ճամբայ ելաւ Հավր երթալու, Յուլիս 4ին, առաւօտեան ժամը 5ի սահմանին, երբ թանձր մառախուղ մը կը պատէր ամեն կողմ, բաղխեցաւ անգղիական Քրօմարթիշայր առագաստանաւին, Սապել կղզիէն 60 մղոնի չափ հեռի Նովա Ընքօթիայի մօտերն։ Քրօմարթիշայրի քիթը մեծ ծակ մը բացած է գաղիացւոյ կողին վրայ, որ արկածէն մէկ ժամ վերջ ընկղմեցաւ՝ ծովասոյզ ընելով 494 ճամբորդ և 117 նաւաստի կամ պաշտօնեայ։ Անգղիացին՝ որ ծանրապէս վնասուած էր, հետևեալ օրն Այրն շոգենաւային ընկերութեան Կրէսիրն շոգենաւի օգնութեամբ Հալիֆաքս բերաւ Լա Պուրկոյնի ճամբորդներէն 54 հոգի և 105 նաւասի, որք յաջողած էին ազատիլ։

Նաւուն մէջ կար 176 կին և չատ մը պզտիկներ. ասոնցմէ մէկ կին միայն ազատուած է։ Կ'ըսուի թէ նաւաստիները փոխանակ ճամբորդներն, մանաւանդ կիներն ու մանուկները ազատել ջանալու, դանակներով ու թիերով յետս մղած են զանոնք ու քանի մը ապաննութիւն ալ գործած են՝ սոսկալի վայրկենին ազատելու առիթը անոնց ձեռքէն յափշտակելու համար։ Ճամբորդներու 100ին 90ը կորսուած է, մինչ նաւաստիներու 100ին 53ը միայն։

Լա Պուրկոյնի մէջ կային եօթը Արաբացի և ինը Հայ ճամբորդներ։ Արաբացիներէն երեք հոգի՝ իսկ Հայերէն ո՛չ ոք կրցած է ազատիլ։

Լա Պուրկոյնի Հայ զոհերն են. Արժ. Տէր Ստեփան Քահանայ, իւր երէցկինը և երեք զաւակներն. Մարտիրոս Աստուրեան, Սիմոն Տունսիքեան, Ստեփան Գազազեան և Թ. Թէվէքէլեան։

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Յուլիս 2—4

—Զօրավար Շաֆթը կը հեռագրէ թէ Ուրբաթ առտու կանուխ յարձակումը սկսած է Սանթիակոյի վրայ։ Կռիւը չատ սաստիկ եղած ու տևած է մինչև երեկոյ։ Ամերիկացիք գրաւած են քաղաքին արտաքին ամրութիւնները։ Նոյն օր ամերիկեան հրամանատարը օդապարիկ մը վեր հանել տուաւ՝ թշնամիին դիրքն ու զօրութիւններն դիտելու համար. սպանիական գնդակներն հետևեցան անոր, որ վնասուելով վար իջաւ։

—Զօր. Օկուսթի, Ֆիլիբիններու կառավարիչը, Գերման ծովակալին յանձնել ուզեց Մանիլա քաղաքը, բայց այս վերջինս մերժեց պայն ընդունիլ, առարկելով թէ քաղաքը պաշարեալ վիճակի մէջ կը գտնուի։

—Պատերազմական տրոց օրէնքը, որ գործադրուիլ սկսեցաւ ամսոյս 1էն, դժուարութեանց բաղխած է. Կառավարութիւնն չի կրնար հասցուել բաւականաչափ դրօշմ՝ հասարակաց պահանջն լեցնելու համար։

—Ծովակալ Քամարայի Ֆիլիբին երթալը ծիծաղ կը պատճառէ ծովակալ Տուվիի ի Մանիլա։ Կ'ըսուի թէ սպանիական նաւատորմիղը անկարող է իսկ մինչև Ֆիլիբեան կղզիները հասնիլ։

—Փոխադրանաւք օգնութիւն կը տանին Զօր. Շաֆթերի։ Չորրորդ զօրաբանակը, 17,000 հոգի Զօր. Քոփինկերի հրամանատարութեամբ, ճամբայ կ'ելնէ Թամփայի նաւահանգիստէն՝ Քիւպա երթալու։

—Զօր. Շաֆթերի մէկ հեռագիրն կը ծանուցանէ թէ կռիւն վերսկսած է Շրթ. առաւ ու Ամերիկացիք ծանրապէս կորսնցուցած են։ Ուրբաթ աւուր ճակատամարտին մէջ հրամանատարը կը կարծէ թէ ամերիկացւոց կորուստը 1000ը կ'անցնի, մեռեալ և վիրաւոր մէկտեղ հաշուելով։

—Ծովակալ Սէրվէրա փախչելու կամ կռուելով ազատելու մտօք, Սանթիակոյի նաւահանգիստէն դուրս եկաւ Կիրակի առաւ։ Ամերիկեան նաւատորմիղը շաբաթ ժամի մէջ կործանեց թշնամւոյն բոլոր նաւերն և 1300 հոգի, որոց մէջ է նաև սպանիական ծերունի ծովակալը, գերի բռնեց։ Ծովակալ Սամսոնը հետևեալ համեստ հեռագիրն կը ղրկէ այս առթիւ Ուաշինկթընի կառավարութեան «Իմ հրամանիս տակ եղող նաւատորմիղը իրրՅուլիս 4ի նուէր կ'աւետէ ամերիկեան ժողովրդին Սէրվէրայի նաւատորմիղի բնաջինջ ըլլալն։ Առաւօտեան ժամը 9½ին թշնամին փորձեց փախչիլ, բայց ժամը 2ին զրահանաւերուն վերջինը՝ Քրիսթոպալ Քոլոն, Սանթիակոյէ 60 մղոն անդին խրեցաւ, ու անմիջապէս վար առաւ իւր դրօշակն։ Վիսքայա, Ինֆանթա Մարիա Թէրէսա և Օքուէնսօ այրած, պայթած կամ խռած են Սանթիակոյէ իրր 20 մղոն ասդին. Ֆուրօր եւ Փլութոն թօրփիլակալներն ընկղմեցան քաղաքին մօտերն։ Մէկ մեռած ու երկու վիրաւոր ունինք»։

—Ծովակալ Սէրվէրա, զարմանալի զուգադիպութեամբ, գերի բռնուելէ վերջ Կլավսէսթրը պզտիկ զրահնաւը գնաց՝ անոր հրամանատար պաշտօնէին անձնատուր ըլլալու համար։ Այս վերջինս՝ տեղական Ուէնրայթ, որ դժբաղդ Մէյնի գործադիր պաշտօնեայն էր երբ մեծ զրահանաւը փեսր. 15ին պայթեցաւ Հավանայի առջև, քաղաքավարութեամբ ու մեծ յարգանքներով ընդունեց իր գերին, ու անոր տրամադրութեան տակ դրաւ իւր անձնական սենեակն։ Կը պատմուի թէ երբ Մէյն ընկղմեցաւ, Տեղական Ուէնրայթ վերջի անձն էր որ դուրս եկաւ անոր բեկորներու մէջէն, և ուխտեց իր ընկերներուն հետ «յիշել Մէյնը»։ Երբ Սէրվէրա անձնատուր եղաւ իրեն, Ուէնրայթի հարկէ յիշեց Մէյնը. եւ երբ Կլավսէսթրի թնդանօթներն սպանիական երկու թօրփիլակալներն յատակ իջեցուցին, Տեղական Ուէնրայթ նորէն «յիշեց Մէյնը»։

—Զարլըսթըն օժանդակ թնդանօթանաւը և միւս փոխադրանաւերը, որք օգնութիւն տարին Ծովակալ Տուվիի, Ֆիլիբեան կղզիներն հասած են ապահով։ Ասոնք իրենց համբուն վրայ Լոտրօնի կղզիներն հանդիպելով՝ զայնս գրաւած ու հոն ամերիկեան դրօշակը պարզած են։ Կղզեաց սպանիական կառավարիչը՝ Մարինա և չատ մը զօրք ծովակալ Տուվիի տարուած են իբր պատերազմական գերիներ։ Վերջի լուրեր կը ծանուցանեն թէ Մանիլայի անկումը մի քանի օրի խնդիր է միայն։

Յուլիս 5—7

—Այս Յուլիսի չորսը, ամերիկեան պատմութեան մէջ ամենէ փառաւորն եղաւ թերևս. Սէրվէրայի բռնուիլը. անոր նաւատորմիղին ոչընչանալը Սանթիակոյի առջև. Զօրավար Շաֆթերի բռնած դիրքը Սանթիակոյի առջև, և անդին ծայրագոյն Արեւելից մօտ, Ծով. Տուվիի նոր գրաւած կղզին ու Մանիլայի մօտալուտ անկումը նոր փառքեր կ'աւելցնեն Ընքոյ Սամի կարող սրոյն։ Յուլիս 4ի առթիւ կատարուած հրախաղերուն նոր ոգևորութիւն և փայլ տուին այս յաղթանակները։

—Զօր. Շաֆթը Սանթիակոյի սպանիական հրամանատարէն քաղաքին յանձնուիլը պահանջեց, և 24 ժամ ժամանակ տուաւ այս պահանջ կատարելու համար. հակառակ պարագային հրամանատարն սպառնացած է ռմբակոծել զՍանթիակո։

—Նախագահը արտօնութիւն տուաւ գերիներուն հեռագրաւ լուր ղրկել իրենց ընտանեաց, պայմանաւ որ հեռագիրներն քննութեան ենթարկուին ղրկուելէ առաջ։ Այս հրամանէն օգուտ քաղող առաջին գերին եղաւ Ծովակալ Սէրվէրա։

—Սպանիացիք մերժեցին Սանթիակոն յանձնել։ Ամերիկեան հրամանատարը հրահանգ տուած է ռմբակոծութիւնն յետաձգել մինչև յառաջիկայ Ուրբաթ։ Ծովակալ Սամսոն կ'ըսուի թէ Սանթիակոյի նաւահանգիստէն ներս չի պիտի մտնէ քաղաքը ռմբակոծելու համար, մինչեւ որ թորփիլօները չի մաքրուին նաւահանգստի անցքէն։ Զօր. Շաֆթը պիտի սպասէ Սամսընի նաւահանգիստ մտնելուն, որպէս զի քաղաքին գրաւումը մեծ կորուստ յառաջ չի բերէ։ Սպանիացիք կարծուածէն աւելի զօրաւոր են քաղաքին մէջ։ Ասոնց զօրքերը ամերիկեան բանակէն աւելի են թուով, և ի հարկէ լաւագոյն դիրքն ունին՝ ամրոցներու և բերդերու մէջ ամրացած ըլլալով։

—Սպանիոյ Նախարարապետն իպաշտօնէ յայտարարած է Սէրվէրայի գերի բռնուիլն ու նաւատորմիղին բնաջինջ ըլլալը։ Սպանիա իրարանցումի մէջ է. յեղափոխութենէ մը կը վախցուի։

—Ընդհանուր հրամանատար ճէնէրալ Մայլս Սանթիակոյ կ'երթայ՝ Շաֆթերի հետ միանալու համար։

—Ֆիսքայայի հրամանատարը՝ որ գերի բռնուած սպանիա ցիներու մէջ կը գտնուի, կառավարութիւնն յանձն կ'առնէ փոխել Հըպսընի հետ։ Ուաշինկթընն մերժած է, կ'ըսուի, Սէրվէրան յանձնել Սպանիացւոց՝ Մէրիմաքի դիւցազնը ետ առնելու համար։

—Ծովակալ Վաթսընն հաստատապէս Սպանիայ պիտի երթայ ծովեզրեայ քաղաքները ռմբակոծելու համար։ Ծովակալը պատրաստութիւններ կը տեսնէ մեկնելու։

—Վերջի հեռագիր մը կը ծանուցանէ թէ Ծով. Քամարայի նաւատորմիղը նորէն Սուէզի նեղուցը մտած է. [illegible] պէս կը թուի թէ Քամարայ ալ աչքկապուկ կը խաղայ։

—Եւրոպական թերթերն կը կարծեն թէ ալ «Սպանիոյ պատիւը» տեղը եկաւ. խաղաղութեան օրը հեռի չէ կ'ըսեն։

—Վերջի հեռագիր մը կը ծանուցանէ թէ Ծովակալ Սէրվէրա, վնասահ ըլլալով իսկ թէ Սանթիակոյի նաւահանգիստէն դուրս ելնելն անխուսափելի կ[illegible] կը նշանակ[illegible] իր նաւատորմիղին, այդ մասին Մատրիտէ եկող հրամանին հն[illegible]ած և դուրս եկած էր նաւահան[illegible] [illegible]ատակ իր կամաց։

ՀԱՐՍԱՆԻՔ ՅՈՒՍԹԸՐ

Յուլիս 6.

Փայլուն հարսանեկան հանդէս մը ունեցանք անցեալ երեկոյ։ Պ. Սարգիս Բրուտեան ամուսնացաւ Օր. Աղաւնի Բարակեանի հետ։ Հարսանեկան հանդէսը սկսեց Կիրակի երեկոյ փեսացուին տան մէջ, ուր ներկայ էին շատ մը բարեկամներ ու ազգականներ։ Կէս գիշերին հարսնևորք առաջին թնդանօթը պայթեցուցին այդ թաղին մէջ՝ Յուլիս 4ի առթիւ, ու շատ մը հրախաղեր կատարեցին։ Հետևեալ օր երեկոյեան ժամը 5ին ընկըսեցաւ պսակի արարողութիւնը հարսնցուի ծնողաց տան մէջ, ի ներկայութեան բազմաթիւ հայ և ամերիկացի բարեկամաց։ Պսակի խորհուրդը կատարեց Պատ. Բարակեան, հարսին հօրեղբայրը. և Պատ. Պէննէեան այդ առթիւ ատենախօսութիւն մ'ըրաւ՝ ամուսնութեան նշանակութիւնն բացատրելով։ Արժ. Տ. Մաշթոց վարդապետ որ յատկապէս հրաւիրուած էր, ուղերձ մը խօսեցաւ, զոր օրհնութեամբ և բարեմաղթութիւններ ընելով վերջացուց։

ՀԱՐՄՆԵՒՈՐ

ԿՈՐՈՍԻՍՏ ԵՒ ԳԻՒՏ

Պէյրութի Տիկին մհ. Եղիսաբէթ Մանուկեան (Իօզպէկեան), որ իւր Մարիամ և Հռեփսիմէ անուն զաւակներով երբեմն Պէյրութի Հայոց վանքի տան մէջ կը բնակէր, վերջերս մեկնած է ի Փարիզ և կամ յԱմերիկայ։ Իր ազգականք կը խնդրեն որ Տիկ. Մանուկեանի ուր ըլլալը գիտցող բարեկամք հաճին տեղեկութիւն տալ Թերթիս Խմբագրութեան 4

ՏԻԳՐԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ
կը հրատարակուի ամէն Շաբաթ օրեր,
ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ։

Յ. ՂՈՒՄԲԻԿԵԱՆ, ... ԳԱՆՁԱՊԵՏ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՈՒ ԲԱՆԱՏԱՑԻ ՀԱՄԱՐ	Տլ.	Սթ.	ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ	
Տարեկան	1	50	Տարեկան	10 ֆրանք.
Վեցամսեայ		75	Բաժանորդագին կանխիկ	
Եռամսեայ		40	վճարելի է միշտ։	

Ծրար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝
To the DICKRIS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City.

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐՔ, ՇԱԲԱԹ, ՅՈՒԼԻՍ 9 1898.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԻՆ ՀԱՇԻՒՆԵՐՆ

Ազգային գործերը վարդագոյն չեն քաղաքիս մէջ. նախորդ ազգային Հոգաբարձութեան հաշիւներու անհատնում խնդիրը չի լուծուեցաւ տակաւին։ Ոմանք կը կարծեն թէ այս խնդիրներն դատարան պիտի տարուին վերջապէս՝ հասկացողութեան մը հասնելու համար։ Սակայն զուտ ազգային խնդիր մը դատարանաց առջև լուծելն ամօթ չէ՞, մանաւանդ անոնց որք, դժբաղդաբար, կը կարծեն թէ նախանձախնդիր են ազգային անուան ու պատուոյն։ Մեզ կը թուի թէ նախորդ Հոգաբարձութիւնը, մանաւանդ անոր յարգելի Ատենապետը Տ. Ալէոն, մտքերնին դրած են այս խնդիր գէշէն յոռեգունին տանիլ. ասոնք օր մը մերժեցին հաշուեքննիչ յանձնախումբը ճանչնալ. օր մ'ալ, ճարահատեալ, տեղի տուին, յանձնելով անոր իրենց հաշիւներուն օրինակն ու կարգ մը քիչ կարեւոր թուղթեր. բայց վերջերս նորէն մերժեցին նոյն Յանձնախմբի վաւերականութիւնն ընդունիլ. և «ի՞նչ ըսեմ այն բերնին որ թէ՛ տաք կը փչէ և թէ պաղ»։

Այս անպատեհութեանց պատճառը ոմանք կը փնտռեն օրինական բծախնդրութեանց մէջ, և ոմանք կը կարծեն թէ անհամաձայնութիւնք լոկ թիւրիմացութեանց պատճառ են. բայց մեզ կը թուի թէ այս կարծիքներն սխալ են բոլորովին։ Եթէ մէկը կարենայ համոզել նախորդ Հոգաբարձութիւնն, ու սորվեցնել մանաւանդ անոր Ատենապետին թէ ազգային գործերու մէջ անձնական ատելութեանց ու անհատական դժուարութեանց լուծումը ապօրինի է փնտռել, այս դժուարութիւններն լմնցած ու կնճիռներն քակուած կը լինին արդէն։

Բայց կա՞ յ աշխարհի վրայ մէկը որ կարենայ խօսք հասկցնել անոր որ հասկնալ չ'ուզեր...։

ՍԻՐՈՎ ԿԸՆԴՈՒՆԻՆԻՆ

Մխիթարական է արձանագրել թէ ՏԻԳՐԻՍԻ մէջ յուզուած առևտրական գործ ընելու խընդիրներն սկսած են քիչ շատ արձագանք գտնել քաղաքիս ու շրջակայից Հայոց մէջ։ Այս կը նշանակէ թէ մեր քարոզածներն «ձայն բարբառոյ յանապատի» չեն ըլլար միշտ։ Այլ և այլ անձերէ նամակներ ստացած ենք որք ոչ միայն կը ձայնակցին մեր ու մեր թղթակցաց խորհուրդներուն, այլ և կը խնդրեն մեզմէ նախաձեռնարկ ըլլալ՝ գործնական քայլ մ'առնել տալու համար, և կառաջարկեն որ այս խընդրոյն համակրող ազգայիններն միասին բերենք երեկոյ մը այս մասին նախնական ժողով մը կազմելու համար։ Քաղաքիս ծանօթ ազգայիններէն մին կը գրէ ի մէջ այլոց թէ «Խնդիրը ձեռք առնենք ու սկսինք գործել։ Ես պատրաստ եմ ընկերանալ, և ինձի հետ կան 50-60ի չափ Հայեր որք կուզեն մասնակցիլ այսպիսի օգտակար գործի մը»։

Այս մասին մեր ստացած բոլոր նամակներուն պատասխանած ըլլալու համար հարկ կը սեպենք ըսել հրապարակաւ թէ ՏԻԳՐԻՍ պատրաստ է ընել ինչ որ իր դիրք ու պաշտօն կը ներեն ընել։ Եւ արդարև ԼՐԱԳՐՈՅՍ համար բարոյական մխիթարութիւն մ'ու վարձատրութիւն մը եղած պիտի ըլլայ եթէ այսպիսի խնդրոյ մը յաջողութեան մէջ կարողանայ մկրտութեան կնքահայրն ըլլալ։

Թող գրեն և ուրիշներ։

ԵԿԵՂԵՑԻՈՑ ՊՆԱԿԸ

Զարմանալի երևոյթ մ'է թէ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, ինչպէս նաեւ ազգային ժողովներու մէջ երբ պնակ կը շրջի, ժողովուրդը—անոր սուրբ մեծամասնութիւնը—ամենափոքր նուէրով մը կը կարծէ իր այդ պարտականութիւնն կատարած ըլլալ։ Ցաւալի է ըսել թէ շատ անգամներ պնակին հասոյթը մէկ տոլարի իսկ չի հասնիր, և այդ՝ մեծաւ մասամբ՝ սէնթերէ բաղկացեալ։

Մեր մէջ կան մարդիկ որք իրարու «իքրամ» ընելու համար, շատ անգամ կը շարուին գինետան մը պատին առջև, ուր «ինչ՞ կը խմեսն ու ինչ՞ կը հրամմես»ը իրարու կը յաջորդեն... և պահ մը վերջ նիւթական ու բարոյական ՀԱՍՍՈՎ մը դուրս կուգան ասոնք։ Սովորութիւն է այս, կըսեն. ամօթ է չի հետեւիլ անոր։ Բայց նոյն մարդիկ երբ եկեղեցի կերթան, խնայող կը դառնան։ Մատներուն մէջտեղ կարմիր սէնթ մը բռնած կամացուկ մը զայն կը սահեցնէ պնակին մէջ մեր պարոն խնայողը, որ գինետան մէջ առատաձեռն էր՝ ընկերներուն առջև ամօթով չի մը-նալու համար. սակայն խնայող ըլլալու լաւագոյն տեղը ո՞րն է, եկեղեցին՝ թէ գինետունը։

ՓԱՐՈՍԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ

Եւրոպական հայ թերթերէ կը տեղեկանանք որ Փարոս, մէկ տարի հրատարակուելէ վերջ, ստիպուած է դադարիլ՝ բաւականաչափ ընդունելութիւն չի գտած ըլլալուն համար։ Անկեղծօրէն կը ցաւակցինք խմբագրութեան, ու կը տեսնենք պակասը զոր թողուց Փարոս. բայց ի՛նչ պահենք մեզքերնիս, մենէ շատեր նոյն վտանգէն բռնուած են այսօր։ Ո՞ր հայ թերթ կրցած է ցարդ առանց զոհողութեանց ու վտանգի ապրիլ։

ՕՐՀՆԵԱԼ ԳԵՐԴԱՍՏԱՆ

Պոլսոյ Բիւզանդիոնը կըսէ. «Կը լսենք թէ խառն ժողովի երեկի նիստին մէջ, քաղաքական ժողով մեծամասնութեամբ, կրօնականը միաձայնութեամբ, ընդուներ են Գարակէօզեան Գրիգոր էֆ.ի հետ իրաւախոհ ըլլալու առաջարկը, 20 հազար ոսկիի հիման վրայ։ Բարձր. Ցարութիւն փաշա և Միհրան էֆ. Սէթեան սատկապէս մերժեր են իրաւախոհութեան գաղափարը, մանաւանդ այն նուէրի ձևը որով Գրիգոր էֆ կուզէ «չնորհել ինչ որ հաճի չնորհել մինչև մէկ տարի»։ Ցարութիւն փաշա ըսեր է որ իրաւախոհ ըլլալէ ետքը, գոնէ 40 հազար ոսկի պէտք է առնէ ազգը հնչիւն դրամով, և ոչ թէ «մինչև մէկ տարի կալուածներ գնելու, Ս. Փրկիչ հաստատութեան վրայ դարձնելու և միշտ Գարակէօզեանի մը ներքև մնալու պայմաններով։» ...Օրհնեալ գերդաստան...։

Շիաակ չէ՞ որ ազգը, փոխանակ իրաւախոհ ըլլալու այդ ժլատ վսեմվվ հետ, միաձայն ըսէ անոր երեսին «Թո՛ւ թքել եմ քու ալ պայմանիդ ալ վրան»։

ՈՒՂՂՆ ՈՒ ԱՍԵՂԻՆ ԾԱԿԸ

Իրաւունքի մէջ կը կարդանք. «Ս. Իզմիրլեանի օրով Պատրիարքարանի քարտուղար Տիրան Քէլէկեան, որ Օսմ. պանդային ցոյցէն ետքը Եւրոպայ եկած, Հայկ. դատը ջատագովող հրատարակութիւններ ըրած անգլիական թերթերու մէջ և ապա կ. Պոլիս վերադարձած էր Սուլթանի անձնական գանձին նախարարութեան մէջ պաշտօն ստանձնելու համար, վերջերս Վիէննայի ճամբով ժընէվ այցելելէ ետքը Փարիզ հասաւ, ուրկէ Լօնտրա և Մանչէսթըր ալ պիտի երթայ։ Տիրան Քէլէկեան Ահմէտ Ճէլալէտտին փաշայի գաղտնի հրահանգներով Եւրոպա եկած է, բանակցելու համար Հայ յեղափոխականներու և հայրենասէրներու հետ։ Բանակցութեան նպատակը յայտնի է, դադրեցնել յեղափոխական գործունէութիւնը և հակաթուրք հրատարակութիւնները. ուրիշ խօսքով հաշտութիւն գոյացնել Հայերուն և Թուրքիոյ միջև»։

Ասեղի ծակէն դիւրին է թերևս ուղտ մը անցունել, բայց Հայն ու Թուրքը դրամով ու խոստումներով հաշտեցնելն անկարելի է ասկէ վերջ։ Այսպիսի հաշտութիւն մը կը կայանայ Հայ ազգի արդար պահանջներուն գոհացում տրուելուն մէջ միայն։

Եւ կարելի՞ է մոռանալ այնքան արիւն՝ որ թափուեցաւ վերջի ջարդերուն մէջ...։

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Իրաւունքի մէջ կը կարդանք. «Կ. Պոլսոյ Խառն ժողովը որոշեր է դարձեալ միջոցներ ձեռք առնել գաղթականներու վերադարձը դիւրացնելու»։

Շնորհակալ ենք. աւելի աղէկ է գաղթողներու հոսանքը դադրեցնելու համար ժողովրդի վիճակը բարւոքելու միջոցներ ձեռք առնեն։

ԻՆՉՈՒ ՉԷ

Շարժումի Պոլսոյ թղթակիցը կը գրէ Մայիս 29ին թէ նախարարութիւնն հեռաւեալը յղած է ազգ. Պատրիարքանի «Արդէն ասկէց առաջ ծանուցուած էր Պատրիարքարանիդ թէ Սիսի Կաթողիկոսական ընտրութիւնը պիտի կատարուի նոյն աթոռի սեպհական եպիսկոպոսներու մէջէն և ընտրելիներուն ցանկը Ատանայի մէջ գումարելի Ընտր. ժողովոյ կողմանէ ուղղակի Բ. Դրան հաղորդուելով՝ պէտք եղած սրբագրութիւնը ըլլալէ յետոյ ետ պիտի դարձուի, որուն վրայ պիտի կատարուի վերջնական ընտրութիւնը։ Արդ նկատելով որ նոյն աթոռի եպիսկոպոսներուն մէջ կաթողիկոսութեան արժանաւորներ կը պակսին, բացարձակապէս և մէկ անգամի համար կ'արտօնէ որ Բարթողիմէոս, Խորէն Աշըգեան և Մելքիսեդեկ Մուրատեան եպիսկոպոսներէն մէկն ալ կարելի ըլլայ ընտրել։ Իսկ գալով Խառն ժողովին կողմէ ընտրուած տեղապահին (Սահակ եպիսկոպոս Խապայեան), անոր պաշտօնը չէ ընդունուած և արդէն այս ընտրութեան խնդրին մէջ Պատրիարքարանի մասնակցութեան պէտք չէ մնացած»։

Եթէ ազգային վարչութիւնը շարունակէ մնալ անկարողներու և անյարմար անձանց ձեռքին մէջ, չի պիտի զարմանանք եթէ օր մը լսենք թէ Պատրիարքարանը Բ. Դուռը փոխադրուած է, և Պատրիարքին տեղ Շէյխիւլ Իսլամը պիտի պաշտօնավարէ՝ ցնոր տնօրինութիւն։

ՍԱՐԱՃԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՆ ՈՒ ՄԵՆՔ

Ի պատասխանի Վեհափառ Հայրապետի հեռագրին, քաղաքիս ազգային ընդհանուր ժողովը, գրեթէ միաձայնութեամբ, մերժեց ընդունիլ զԱրժ. Յովսէփ Ծ. Վ. Սարաճեան իբր ընդհանուր հովիւ Ամերիկայի Հայոց։ Մեր անդրանիկ հովիւը անծանօթ լինելով այս երկրի լեզուին, և հեռի նշանաւոր քարոզիչ մը լինելու հաւանականութենէ, իհարկէ չէր կրնար մեր հաճութիւնն ստանալ՝ կրկին անգամ պաշտօնավարելու համար ի Նոր Աշխարհ։ Բայց ասոնք, Սարաճեան վարդապետ, թէև մեր եկեղեցականաց մէջ նշանակելի տեղ մը բռնելու չափ կարող նկատուած մի կղեր, չունի սակայն բաւական վարչական կարողութիւն այս ցիր ու ցան գաղթականութիւնն հովուելու։ Իր առջի պաշտօնավարութեան միջոցին Յովսէփ Վ. ցոյց տուաւ արդէն այս ամենն. և երբ նորին Արժ. հրաժարեցաւ իր պաշտօնէն, ոմանք ըսին թէ ժողովուրդի դժգոհութիւնն էր պատճառ. ոմանք ալ կարծեցին թէ ինքն դժոհ էր ժողովրդէն. սակայն ասոնց որն ալ ըլլար իրողութիւնն, սա կարելի չէ ուրանալ թէ դժգոհութիւն մը կար անպատճառ։ Կամ հովիւն չէր սիրէր զիւր հօտ, կամ հօտը չէր հաճէր հովիւն։ Մէկը որ մեզ չի սիրեց կամ մէկը որ մեզմէ չ'սիրուեցաւ իր առջի պաշտօնավարութեան միջոցին, կարելի չէր կարծել թէ պիտի կրնայ ժողովրդի պահանջներուն գոհացում տալ այս անգամ, երբ մանաւանդ ժողովուրդը զարգացած է այժմ, ու գաղթականութեան թիւը բազմապատկուած է արդէն։

Անցեալ Կիրակի աւուր քուէարկութիւնն մի որդիական խոնարհ բողոք է Վեհ. Կաթողիկոսի առաջարկին դէմ։ Մենք Խորէն եպիսկոպոս Ստեփանէ մը կը պահանջենք. Նորին Ս. Օծութիւնն մեզ Իւթիւճեան կամ Սարաճեան վարդապետները կ'առաջարկէ։ Այս վիճակ, որ կարևորագոյնն է իր տեսակին մէջ, կարող եկեղեցականի մը կը կարօտի՝ մեզ կըրնալ հովուելու համար։ Ստեփանէ մը միայն կրնայ այս ցրուած և տարբեր երկիրներէ եկող ժողովուրդը կառավարել՝ իր բարոյական բարձր կարողութեամբ։ Եւ տարակոյս չունինք որ Նորին Ս. Օծութիւնն տեղի պիտի տայ օր մը մեր այս պահանջին եթէ չարունակենք պահանջել՝ առանց տեղի տալու «իրաւախոհական» եթէ չարունակենք պահանջել՝ առանց տեղի տալու «իրաւախոհական» առաջարկութեանց։

Կ'ըսուի թէ Ս. Կաթողիկոսի կամքէն անկախ պատճառներ կ'արգիլեն զԽորէն սրբազան Ամերիկայ գալ։ Կը հաւատանք այս կարծեաց. բայց կըրնան այդ պատճառները մեզմանալ եթէ Կաթողիկոսն հաճի հաշտարար դառնալ քաղաքական իշխանութեանց քով։ Հայրիկ աքսորական մ'էր յերուսաղէմ. իր զաւակաց ձայնն աքսորականը Ս. Լուսաւորչի գահուն վրայ բարձրացուց։ Ստեփանէ եպիսկոպոս բանտարկեալ մը կրնայ ըլլալ յիշմիածին, բայց Ամերիկայի Հայոց ձայնը կրնայ զայն օր մը Նոր Աշխարհ փոխադրել։

Հ. Է.

ՈՒ. Է. ԿԼԱՏԸՍԹՈՆ

(Շարունակութիւն և վերջ)

Կլատըսթոն առաջին անգամ նախարարապետ եղաւ 1869 թուին, և կարգ մը Իռլանտայի վերաբերեալ օրէնքներ ընդունել տալէ զատ, 1870 ին «բանակի կարգադրութեան» օրէնքը անցուց, որով բանակին մէջ աստիճան գնելու յոռի սովորութիւնն միանգամ ընդ միշտ վերցաւ Անգլիայէն։ Ֆրանքօ-Գերման պատերազմին ժամանակ Կլատըսթոն չէզոք դիրք մը պահեց։ 1875ին՝ նախանձի ու անհամաձայնութեանց պատճառաւ՝ ազատականաց պարագլուխն ըլլալէ հրաժարելով՝ ատեն մը գրականութեամբ զբաղեցաւ, ու վեհաժողովին վրայ քննական գիրք մը գրեց, որ անգլիական գրականութեան պարծանքներէն մին կը նկատուի այսօր։

Երբ Տաճկաստանի խռովութիւններն սկսեցին, Սերպիոյ կռիւն ու Պուլկարիոյ ջարդերն վրայ եկան, Կլատըսթոն հոգւով ու սրտով հրապարակ եկաւ։ Իր «Պուլկարական Խըժդրժութիւններ» անուն գիրքը՝ խոր տպաւորութիւն մը ձգեց Եւրոպիոյ հանրային կարծեաց, ինչպէս նաև Ռուսիոյ վրայ, որոյ միջամտութեամբ Պալքանեան ազգերն ազատութիւն ձեռք բերին։ 1881ին Նորէն Կլատըսթոնի յանձնուեցաւ Անգլիոյ կառավարութեան ղեկը։ Յաջորդ տարին Եգիպտոսի խնդիրն ծագեցաւ և Սուտանի դժբաղդ պատերազմը սկսեց։ Երբ այդ կռուին մէջ Ճէնէրալ Կորտոնի եղերդական մահը տեղի ունեցաւ, ողջոյն Անգլիա զայրոյթ մ'ըզգաց դէպի մեծ ծերունին։ Թէև կարելի չէ ըսել, թէ Կլատըսթոն ո՛ր աստիճանի պատասխանատու էր այդ դէպքին, բայց և այնպէս ժողովուրդը «Կորտոնի դահիճն» անուանեց զայն։ Պատմութիւնը սակայն՝ ցոյց պիտի տայ մի օր, թէ Անգլիոյ մեծագոյն նախարարապետն այդ մասնաւոր խնդրի մէջ անմեղ էր բոլորովին։

1885ին Իռլանտիոյ հռչակաւոր Հօմ Ռուլի օրէնքն անկարող ըլլալով ընդունել տալ, Կլատըսթոն հրաժարեցաւ։ Բայց երկրորդ անգամ մ'ալ փորձել ուզելով՝ երեսփոխանութիւնը լուծեց ու նոր ընտրութիւն կատարեց։ Բայց երբ այս ընտրութեանց արդիւնքն իրեն դէմ գտնելով, ըստիպուեցաւ հրաժարիլ։ Այդ առթիւ վեհ. թագուհին ուզեց «Լորտ» անուանել զԿլատըսթոն, բայց մեծ ծերունին մերժեց այդ վարձատրութիւնը, վասնզի տիպողոներն անոնց համար են, որք տիպողոսով կը բարձրանան, և ոչ թէ անոնց համար՝ որք տիպողոսը կը բարձրացնեն։

1892ի ընտրութեանց ատեն Կլատըսթոն, որ 83 տարեկան ծերունի մ'էր, կռուեցաւ նորէն ու շահեցաւ յաղողութեամբ։ Իր այս վերջի վարչութեան օրով՝ մեծ ծերունին նորէն փորձեց Հօմ Ռուլը. թէև երեսփոխանաց ժողովին մեծամասնութեան քուէն առաւ այս անգամ, բայց լորտերու ժողովը չի յաջողեցաւ շահիլ։ Ասոր վրայ, 1894 Մարտ 1ին, Կլատըսթոն իր վերջի ճառին մէջ թելադրեց Լորտերու ժողովին իրաւասութեան սահմանն չափաւորել կերպով մը՝ երկրին ու ընդհանուր ժողովրդի շահերն ու իրաւունքներն քանի մը մեծատուններու ձեռաց մէջ խաղալիք դառնալէ ազատելու համար։

Այս միջոցներուս, աչքերն ալ բաւական տկարացած ըլլալով՝ Կլատըսթոն տեղի տուաւ վերջապէս իր ընտանեաց թախանձանաց, և հրաժարեցաւ ամէն պաշտօնէ՝ իր բեղմնաւոր կենաց մնացեալ մասը խաղաղութեամբ անցնելու համար ի Հավարտէն։

Իւր այս բազմազբաղ քաղաքական ասպարէզէն քաշուելէ վերջ, Կլատըսթոն, ամբոխին ու տկարին բարեկամը, լուռ չի մնաց սակայն. մեծ ծերունին քանի՛ցս իւր հզօր ձայնը բարձրացուց Հայ ազգին համար։ Դեռ Հայ ժողովրդի մտաց մէջ թարմ է այն նշանաւոր ճառը, զոր խօսեցաւ Կլատըսթոն Զէյթըրի հրապարակային ժողովին մէջ՝ Թուրքիոյ Սուլթանն մարդասպան մ'անուանելով։ 1897 ին Ուէսթ Մինըսթրի դքսին իւր գրած ընդարձակ նամակը ուշադրութեան արժանի ուրիշ նշանաւոր կէտ մ'է ի հարկէ. այս նամակ՝ Կլատըսթոնի քաղաքական վերջի թուղթն է և վերջի կտակը ապագային համար։ Անկարելի է թէև հոս մէջ բերել այդ շահեկան գրութիւնը, բայց գաղափար մը տալու համար բաւական կը սեպենք թարգմանել կտոր մը միայն, որ կոչում ունի ապագային մեծ նշանակութիւն ստանալ Եւրոպական քաղաքագէտներու աչքին։

«Վեց Պետութիւնք կը թուի թէ սկսած են արդէն այս ահաւոր դէպքերը (կոտորածները) անցած գացած, մեռած ու թաղուած նկատել։ Սոքա կը մոռնան սակայն, թէ այդ դէպքերուն իւրաքանչիւրը պիտի կենդանանայ պատմութեան մէջ, եթէ իրաց ալ թողունք վերին գերագոյն յիշատակարանն մարդկային արարոց։ Եւ մինչ վեց Տէրութիւնք, մըտքի ամենայն հանդարտութեամբ, քաղաքական ներկայ մեծ թատերախաղի յաջորդ արարուածը սկսիլ կը ձեռնարկեն, կը թուի չենզգար թէ մէն մի քայլափոխին Հայաստանի կոտորածոց այրուղ կսյծերուն վրայ կը կոխատեն»։

Կլատըսթոն եթէ մեծ քաղաքագէտ մը չ'ըլլար, աշխարհիս պատմութեան մէջ պիտի փայլէր իբր ականաւոր գրագէտ։ Շատ երկար պիտի լինէր եթէ իր գրական գործոց վրայ փորձէինք ակնարկ մը նետել։ Մեծ ծերունիին միտքը ընտանի էր գրեթէ ամեն խնդիրներու ու գիտական հիւղերու հետ։ Դարուս մէջ քիչեր կան որք լեզուագիտութեան մէջ կրնան մրցիլ Կլատըսթոնի հետ։ Իտալերէն, Յունարէն և Լատիներէն լեզուներն գիտէր իր մայրենի լեզուին չափ աղէկ։ Գաղղիերէնի՝ Գաղղիացիի մը չափ հմուտ էր, սա բացառութեամբ որ հնչումներն իւր օտարական ըլլալն կը մատնէին խօսած ժամանակ։

Իր ընտանեկան կեանքի մէջ օրինակելի մէկն էր Կլատըսթոն. բարի հայր մը, երջանիկ ամուսին մը ու հայրենասէր քաղաքացի մը մարմնացած էին յանձին մեծ անգլիացւոյն։

ՄԱՆՐԱԼՈՒՐՔ

—Անցեալ Կիրակի օր Ս. Ոսկեբերան եկեղեցւոյն մէջ տեղի ունեցաւ ազգային ժողովոյ ծանուցեալ նիստը՝ ներկայութեան 60ի չափ ազգայնոց։ Կանխաւ ցրուուած յայտարարութեանց համաձայն՝ խնդրոյ առարկայ եղաւ միայն Վեհ. Հայրիկէ եկած այն հեռագիրն, որ հրատարակուած էր մեր անցեալ թուով։ Յետ երկար վիճաբանութեանց՝ մէկի դէմ 47 քուէով որոշուեցաւ չ'ընդունել Տ. Յովսէփ Վարդապետ Սարաճեան՝ իբր ընդհանուր հովիւ Միացեալ Նահանգաց Հայոց։

—Բաղաքիս հասարակաց թիւ 46 վարժարանի քննութիւնք տեղի ունեցան անցեալ շաբթու մէջ. ընթացաւարտ 50 աշակերտաց մէջ կար նաև Հայ մը, Բիւզանդ Կոսդիկեան, որոյ Քոլէճ մտնելու համար անցուցած ամենայաջող քննութիւնն, վարձատրուած է բարձր պատիւներով։ Պ. Կոսդիկեան, ոսկի մետալ մը ստացաւ այս առթիւ։

—Լօրէնսի Տէր Ստեփան Քահանան, որ երկու շաբաթէ ի վեր քաղաքս կը գտնուէր, շաբաթ օր մեկնեցաւ՝ Հայրենիք երթալու համար։ Քաղաքիս մէջ 53 տոլարի չափ հանգանակուեցաւ Տէր Ստեփանի ճանապարհի ծախուց համար։

—Տ. Թէրզեան մեզ կը գրէ որ, անցեալներն Ուսթը երթալով հետամուտ եղած ու ստուգած է, թէ Եփրատի Խմբագիրը Կլատըսթոնի ընտանեաց մխիթարական հեռագիր մը տալու խնդրոյն հակառակ չէ եղած երբէք. և կը ցաւի, որ այդ մասին քանի մը սուր ակնարկութիւններ ըրած էր ՏԻԳՐԻՍի մէջ։

—Տ. Հայկ Զիթճեան, որ երկու տարիէ իվեր քաղաքիս մէջ սիկարէթի գործ կ'ընէր «Էֆիփիչըն Թօպաքօ Բըմբընի» անուան տակ, կը լսենք թէ վերջերս ընդարձակած է իւր գործարանը, ուր 70ի չափ գործաւորներ կը գործեն, որոց 30է աւելին Հայ են և քանիներն ալ Բարեգործական Ընկերութեան կողմէ ղրկուած։

—Գերմանիոյ համալսարաններուն մէջ կը գտնուին 41 հայ ուսանողներ, որոնց 26ը Պէռլինի, 3ը Հալլէի, 1ը Սթրազպուրկի, 1ը Մարպուրկի, 3ը Տարմշթատի և 7ը Լէյբցիկի մէջ։

—Յունիս 26թուով մեզ կը գրեն «Պատ. Յ. Մ. Հայկունի, անցեալ Կիրակի օր Տքթ. Պօղոս Առաքելեանի երեք որբերը և որբևարի կինը ներկայացուց քաղաքիս այն եկեղեցւոյն ժողովրդեան, որոյ քարոզիչը ժամանակաւ աննպաստ քարոզ մը խօսած էր Հայկական դատի և Հայոց կոտորածի նկատմամբ։ Տքթ. Պ. Առաքելեան, որ Հայ մարտիրոսներէ մին եղած է կոտորածներու ատեն, այս եկեղեցւոյ անդամ է եղեր։ Պատ. Հայկունի առիթէն օգուտ քաղելով, թէ որբերուն և թէ որբևարի տիկնոջ խօսել տուաւ այս եկեղեցւոյ ամպիոնէն Տքթ. Առաքելեանի մահուան և Հայ կոտորածներու վրայով։

Պատ. Հայկունի քանի մը տեղւոյն յարմար ազդու խօսքեր ընելէ վերջ, եկեղեցին որոշեց այս որբերը ամառանոց ղրկել իրենց մօր հետ, և ապագային հոգ տանիլ անոնց դաստիարակութեան։

Պատ. Հայկունի կը փափաքի գիտնալ, թէ կա՞ն հոս ուրիշ որբեր ալ որոնց ծնողք կոտորածի զոհ գացած են։»

—Փրովիտէնսի որբախնամ ընկերութիւնն՝ որ հաստատուած էր անցեալ Փետրվարին, և որ ունի 45ի չափ անդամներ, իւր առաջեն ունեցած 75 տոլարը Տ. Վաղինակ վարդապետի ձեռամբ Պատրիարքարան պիտի ղրկէ մօտերս։

—Անցեալ Շաբաթ երեկոյ Փրովիտէնսի Հնչակեան մասնաճիւղը ինպատ Յելափոխական գործին՝ նուագահանդէս մը տուաւ, ուր Հայ նուագածուաց խումբը նուագեց արևելեան և տեղական շատ մը ընտիր եղանակներ, ու կարդացուեցան քանի մը զուարճալիքներ, որք լաւ տպաւորութիւն ըրին ժողովրդի վրայ։ Տ. Ա. Արփիարի «Օրհնեալ գերդաստանը» շատ հաճելի թուեցաւ ժողովրդին։ Հանդէսը փակուեցաւ վիճակահանութիւնով մը։

—Անցեալ Կիրակի օր Տ. Վաղինակ վարդապետ եկեղեցական արարողութիւններէ վերջ մկրտեց. Տ. Մկրտիչ Մելգոնեանի որդին։

—Մաթիկ աղա Խաչատուրեան, 76ամեայ Պոլսեցի ազգայիը որ կաշխատէր Շալճեան կազմատան մէջ, անցեալ երկուշաբթի յանկարծամահ եղաւ։ Բաղաքիս ոստիկանութեան յանձնուած է կը լսենք հանգուցեալին

(Շարունակութիւնն 4րդ երես)

ՆՈՐԱՎԷՊ ԱԶԳԱՑԻՆ ԱՆՄԵՂ ԶՈՀԵՐ

Բ.

—Քանի այժ ունիմ պիտի կռուիմ խոջեդոտների դէմ, մինչև տեսնենք ինչով կ'վերջանայ այս ցաւը. եթէ զաւակներս անօթութեան չ'դիմանալով՝ աչքիս առաջ սովալլուկ մեռնին, այն մխիթարութիւնը կ'ունենամ, որ ազատեցան ցաւերով լի աշխարհից, կամ ցաւերի հեղինակ սեւահոգի մարդկանցից. հանգիստ սրտով կ'մեռնիմ, այն տեղ՝ յաւիտենականութեան մէջ կը սիրեմ և կը սիրուիմ նորանցից. մի քանի օր ևս, կ'խզուին գերութեան կապանքները՝ կ'ազատինք մարմնի բնական պահանջների ծանրութիւնից։ Հողը կրկին կը դառնայ հողին...։

Տիկին Սուրէնեան իրանց կեանքի վճիռը այսպէս որոշելով՝ վերցրեց մազի փունջերը, համբուրեց և կըրկին տեղաւորեց ծոցումը. իսկ երեխաները, պահանջածը չ'գտնելով, մերկ տախտակամածի վերայ փռուած՝ վաղուց քնացել էին։ Երկրորդ օրը հպահանջը աւելի սաստկացրին. երկար պօռացին, ճչացին, բայց նորից թմրելով՝ ինկան անզգայութեան մէջ։ Երրորդ օրը երեքն էլ նուաղած էին, երբեմն երբեմն հաց մըրմընջալով։

Տիկին Սուրէնեան, իբրև գթոտ մայր, չէր կարող անտարբեր մնալ այս տեսարանից. թէև դեռ բաւական այժ ունէր քաղցի հրէշի դէմ օրերով մաքառելու, բայց տեսնելով մոռացած, երեսից ձգուած զաւակների տանջանքն, որոնց բարեկեցութեան համար չէր խնայած ամենաչնչին խնամքը, ու զգալով որ ինքը անզօր է նորանց ազատել, գլուխը պտուտեց և գետնատարած փուեց իր սրտի հատորների շարքում։ Անցան օրեր. մինը միւսի ետևից սովամահ եղաւ։ Ամենավերջը մեռել էր Տիկին Սուրէնեան, սոսկալի տանջանքներով, որ ստուգուեցաւ բժշկական քննութիւնից։

Տարաբաղդ զոհերի մեռած օրը, երէկնադիմին, Լօնտօնից Նիւ Եորք է ժամանում Սուրէնեանի դաղափարական ընկերը՝ Սամոթը։ Սուրէնեանի դասընկեր և սրտակից Սամոթը Սանասարեան դպրոցի սաներից մինն էր. Սուրէնեան դեռ ուսանողութեան ժամանակ սիրով կապուում է Սամոթին. վերջինս իր աշխոյժ, աչքաբաց և խոհուն բնաւորութեան շնորհիւ, վայելում է Սուրէնեանի ծնողաց համակրութիւնն ու սէրը. Շաբաթ կէսօրից մինչև Երկուշաբթի առաւօտ՝ Սուրէնեանի ծնողաց մօտ հիւրընկալուում էր Սամոթ, որին իրանց որդու պէս սիրում, փայփայում էին։

Միևնոյն տարին երկու սրտակից ընկերներն աւարտեցին Սանասարեան դպրոցի դասընթացը. Սամոթ վաղուց յայտնել էր Սուրէնեանին իր ձգտումների մասին. նորա միակ փափաքն էր բժշկութիւն ուսանիլ և այնպէս ծառայել Հայրենիքին. «Առողջ միտք, առողջ մարմնի մէջ» յաճախ կրկնում էր. —եթէ դու ցանկանում ես կըրթել մատաղ սերնդի մտքերը, ես էլ ցանկանում եմ առողջ պահել նրան։

Սամոթ ընթացքը աւարտելուն պէս ուղևորուեց Հայրենիք, ծնողաց հաճութիւնը առնելու, որ արտասահման անցնելով՝ ուսումը շարունակէ։ Հայրենիք հասնելուց երկու ամիս էր անցել. նամակ չէր ստացել Սամոթից։ Սուրէնեան գիտէր նորա դիտաւորութիւնը, գիտէր նա ևս Սամոթի հօր հարուստ և այն տեսակ մարդկանցից չ'լինելը, որ արտասահմանեան մեծ ծախսերի պատճառով որդու ձգտումներին հակառակի։

(Շարունակելի)

ՄԱՆՐԱԼՈՒՐՔ

(Շարունակութիւն 3րդ երեսէն)

մարմինը։ Մաթիկ աղա քաղաքիս մէջ ազգական շունեցած ըլլալուն համար ազգ. Հոգաբարձութեան անկէ անոր ստաուածքն իր հսկողութեան տակ առնել։

—Անցեալ Կիրակի օր Կարապետ Պետրոսեան անուն 20ամեայ երիտասարդը, որ կը բնակէր ի Լին, Պրայթընի մօտ Զարլըս գետի մէջ խղդուեցաւ լողցած ժամանակ. իւր ընկերն՝ Պետրոս Գրիգորեան՝ թէև չանաց ազատել զինքը, բայց չի յաջողեցաւ։

—Դատէմի Ուսումնասիրաց ընկերութեան վեցամսեայ ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ Պրայթընի մէջ անցեալ Կիրակի օր, որ առաւօտեան ժամը 10էն մինչև երեկոյեան վեցը տևեց։ Մասնաճիւղերու ղրկած 6 ամսեայ տարոց կանխիկ տրոց գումարն էր 159 տոլար 15 սէնթ։ Այս ընկերութիւնն ունի այժմ 950 տոլար։

—Պոսթոնի լսարանի Վարչութեան որոշմամբ անցեալ Կիրակի երեկոյեան ժողովն յատկացուած է որբերու խնդրոյն։ Այս առթիւ խօսած են Պատ. Կայծակեան, Տիարք Զիթճեան, Լևոնեան, Փափազեան և Զարշաֆճեան. Տիարք Փափազեան, Թուխմանեան, Շաւարշ և Մելիք խոսացան շաբաթական 25 սէնթ վճարել ի նպաստ որբոց։ Ցանձնախումբ մը կազմուած է հանգանակութիւնը շարունակելու պաշտօնով. ասոր անդամներն են Տրք Փափազեան, Լևոնեան, Թուխման. Պալեան և Թումասեան։

—Քաղաքիս Բարեգործական Ընկերութեան Գործակալը կը լսենք թէ հրաժարած է իր պաշտօնէն։

—Տ. Մուշեղ Մուրատեանէ կարևոր թղթակցութիւն մը ստացանք վերջի պահուս Լիանիտաս շոգենաւէն գրուած, Քի Ուէսթի առջև. նամակը անդլիերէն գրուած ըլլալով՝ անոր թարգմանութիւնը կը հրատարակենք գալող շաբթու։

—Անցեալ Շաբաթ երեկոյ Խարբերդցի երիտասարդ մը Սեբաստիացի օրիորդի մը հետ պիտի ամուսնանար սա հասկացողութեամբ որ պսակը պիտի կատարուէր «կոյս ընդ կոյսի»։ Վերջի պահուն երբ Արժ. Խադ Վարդապետու Տ. Վահրամ Քահանայ կը պատրաստուէին արարողութեանց սկսիլ, հարսնցուն՝ լսելով թէ երիտասարդն —որոյ առաջին կինը մեռած էր ժամանակին— զաւակ միսկ ունէր ողջ՝ քաջութեամբ մերժեց փեսացուն

—Լա Պուրկոյնի զոհերէն մին էր Իսմայիլ Եուուֆ, նշանաւոր տաշիկ ըմբիշը։

Ց. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ,

Թիւ 628 3րդ Ավենիւ, Նիւ Եորք։

Կը ծանուցանէ թէ, իբրև ներկայացուցիչ համբաւաւոր մի վաճառատան, կարող է ծախել ամէն տեսակ հեծելանիւներ խիստ աժան գներով։ Գնել փափաքողք եթէ իրեն դիմեն գոհ կը մնան միշտ։

ՀՐԱՒԷՐ

Նիւ Եորքի Հայաստանեաց Եկեղեցւոյ դպրաց դասը կը խնդրէ լաւ ձայն ունեցող երիտասարդներէն գալ և ընկերանալ խմբիս։ Դպրութեան վարժ չեղողներուն յատկապէս դաս պիտի տրուի։

Մասնաւորապէս կը խնդրուի ծնողքներէ որ իրենց մանր տղաքները ալ ղրկեն՝ դպրաց դասուն միանալու համար։ Ամէն ջանք չի պիտի խնայուի անոնց՝ դպրութիւն ուսուցանելու համար։

Արարողութիւնք կ'ըսկսին ամեն կիրակէ, կէսօրէն յետոյ, ժամը 1ին, Ոսկեբերան եկեղեցւոյն մէջ, 39րդ փողոց Ղրդ ավենիւանկիւնը։

Ի դիմաց Դպրաց դասու

Դպրապետ Մ. ԹԱՇՃԵԱՆ

ԹՐՔԱԿԱՆ ԱՄԵՆԱԸՆՏԻՐ ՍՈՒՐՃ

Պատիւ ունիմ ծանուցանել արդոյ հասարակութեան թէ Թուրքիայէն սկսած եմ ընտիր սուրճ բերել տալ՝ հոս վաճառելու համար։ Իմ բերել տուած ապրանքս ամենաազնիւ տեսակէն է, անանկ որ միանգամ անոր հոտն ու ախորժելի համն առնող մէկը պիտի ստիպուի իմ մեայուն յաճախորդս դառնալ։ Այս համոզմամբ է որ մէկ փորձ մը միայն կը խնդրեմ արդոյ ընթերցողներէն։

Գիներս շատ դիւրամատչելի են։

Հում սուրճին փաթը 30 սէնթի կը վաճառեմ. իսկ խորոված ու թրքական ջաղացով քաշուածին փաթը՝ 45 սէնթի միայն։

Փափաքողք հաճին գրել ինձ հետևեալ հասցէով։

Ա. ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ

Փոսթ Օֆիս, Ուէսթ Հոպոքըն, Ն. Ճ.

ԱԶԳ

Օդերը մեղմ են, բայց հիւանդութիւնք անպակաս են միշտ։ Երբեմն դեղագործք թարմ դեղեր չի գործածելով ամենէ ճարտար բժշկի ջանքերն անգամ իդերև կը հանեն. դեղը բժշկին չափ կարևոր է շատ անգամ։

Մեր դեղերը ոչ թէ միայն թարմ այլ շատ աժան են։

Ս. ՐՕՓՀՕԼՏ

ՎԿԱՑԵԱԼ ԴԵՂԱԳՈՐԾ

472 3րդ Ավենիւ, 32րդ Փողոցին մօտ։

ՃԻՒՂԵՐ ունինք ի Պրուքլին և ի Լոնկ Այլընա Սիթի։

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳԻՏԱՐԱՆ

9երորդ Տպագրութիւն

Մաքսուէլ Սըմբրվիլ

Հրատարակիչ

Կը բաղկանայ 25 մեծագիր հատորներէ, որք կը վաճառուին բաժանորդագրութեամբ միայն։

Սոցա գինն է,

Կտաւեայ կազմ	62 տոլ.	50	սէնթ
Կէս կաշիակազմ	87 „	50	“
Փառակազմ	100 „		

Առաջին տեսակէն կը ղրկուի առանց որք յանձն կառնեն վճարել ամիսը 2 տոլար 50 սէնթ։ Երկրորդին ամսավճարն է 3 ու կէս տոլար, իսկ վերջինին՝ 4 տոլար։

Այս Համագիտարանն Ամերիկեան միակ արտօնեալ տպագրութիւնն է. Ծանցեալք անկատար են ամեն կերպով։

Մանրամասնութեանց համար դիմել Խմբագրութեանս։

ԱԶԳ

Կը փութամ հաղորդել քաղաքիս Հայ հասարակութեան թէ Քոմրն փողոցի թիւ 230 ճաշարանը գընելէս ի վեր մասնաւոր հոգ ու խընամք կը տարուի կարգ ու սարքի, մաքրութեան և կերակրոց համեղութեան։ Միանգամ փորձելը կը բաւէ մեայուն յաճախորդ դառնալու համար։

ՄԱՑՔ ՊԱՔԱՑԵԱՆ

Լօրէնս Մասս. 3

Ա. ԹՕՓՈՒԶԵԱՆ,

ԿՕՇԿԱՎԱՃԱՌ ԵՒ ԿՕՇԿԱԿԱՐ,

Թիւ 239 Իսթ 26րդ փողոց, Նիւ Եորք.

Այս խանութին մէջ կը վաճառուին ամէն տեսակ կօշիկներ խիստ աժան գներով։ Մեր հայրենակիցներէ փորձ մը միայն կը խնդրենք։



Նոր ապսպրուած կօշիկներ կը կարենք ձեռաւոր և վայելուչ կերպով։

Կը նորոգենք հին կօշիկներ չափաւոր գներով։

Ուրիշի մը երթալէ յառաջ ինձ եկէք անգամ մը. եւ վստահ եղիք որ շատ գոհ պիտի մնաք

— 239 Իսթ 26րդ փողոց —

Արանց կօշիկներ $1.25է մինչև $5.00
Տղայոց և աղջկանց « $1.25է « $2.50
Իրանց կօշիկներ $0.50է « $1.50

ՍՏԵՓԱՆ Փ. ԲՐՈՒՏԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

25 Կրին ըսթ., Ուսթըր, Մասս.

Պատիւ ունինք ծանուցանել թէ մեր սա խանութին մէջ կը պահենք ամերիկեան ամէն կարգի ժամացոյցներ, շղթաներ, մատանիներ և.։

Մեզ դիմողներն գոհ եղած են միշտ։ Մեր գիներ շատ ու շատ պակաս են բաղդատմամբ տեղացի գոհարավաճառաց գիներուն։

Նաև կը նորոգենք ամեն տեսակ ժամացոյցներ, կարած մատանիներ և ասոր նման իրեր՝ չափաւոր գիներով։ Տարբեր քաղաքներէ ալ երբ ղրկուին մեր ճիւղին վերաբերեալ. ՁԼասուած իրեր, նորոգելով նորէն կը վերադարձնենք։

Գործի յաւութեան միշտ կ'երաշխաւորենք։

ՀԻՐԶՕԼԱ

ՄԱԶԻ ԴԵՂ

Կը զօրացնէ, կը մաքրէ, կը փայլեցունէ մազերը ու թափելը կը դադրեցնէ։ Կը բուժէ նաև մորթի հիւանդութիւնն ու կը մաքրէ թեփերը։

Միանգամ փորձել բաւական է սա դեղին արժէքը դիտնալու համար, որ արևելեան խոտերէ պատրաստուած է յոյժ հաճելի մի հոտով։

Կը ծախուի բոլոր դեղագործներուն քով։

Դին 50 Սէնթ միայն։

Կարելի է ստանալ նաև ՏԻԳՐԻՍԻ ընկերութենէն։

Կը վաճառուի նաև Տ. Ց. Բարակեանի քով, թիւ 45 Էքսչէնճ ըսթրիթ, Ուսթըր, Մասս։

Հաստատեալ 1854



ՅԱԿՈԲ Խ. ԽԷՐՊԷԿԵԱՆ

(Ներկայացուցիչ)

ՈՒԻԼԻԷՄ Պ. ՔԷՕՀԼԸՐ ԵՒ ԵՂԲԱՐՑ,

ՎԱՃԱՌԱԿԱՆ

Գինիի, Օղիի, ոգելից Ըմպելեաց

Թիւ 202, 204 Իսթ 29րդ Փողոց

Նիւ Եորք, Ն. Ե.

Պատիւ ունի ծանուցանել արդ հասարակութեան թէ իւր վաճառած ըմպելիքներն ոչ՝ միայն փորձեալ և անխարդախ են, այլ և դիւրամատչելի են ամէն գաստակարգի անձանց.

Այս վաճառատան մէջ կը ծախուին Եւրոպական, տեղական, Քալիֆորնիայի և տաճկական ամէն տեսակ ուիսքի, օղի, գինի, շամբանիա, մատթիքայ, գարեջուր, պրանտի, ափսինթ և այլն, իրենց ամեն տեսակներովն։

Փափաքողաց գներու ցուցակը ղրկուի առանց ո՛և է ծախքի։

Ցանձնարարութիւնք կը կատարուին ամենայն ճշդութեամբ եւ փութով։ Քաղաքին մէջ ապրանքներն ձրի կը ղրկուին, իսկ քաղաքէ դուրս ղրկուածներուն ծախքը գնողներուն վրայ է։

Ըմպելիքներ կը վաճառուին թէ՛ մեծ և թէ՛ փոքր քանակութեամբ, իրենց յատուկ գներով։ (Հօլսէյլ անտրեթէյլ)

Մեր յաճախորդք երբ չի հաւնին իրենց գնած ըմպելիքներուն, յանձն կառնենք զայնս փոխել, եթէ պակաս ու ՁԼասուած չըլլան։

Ըմպելիքներ կը վաճառուին չիշով, կալլոնով, տակառով և յատուկ սնտուկներով որք կը պարունակեն 12 կամ 24 շիշեր։

Դիմել յիշեալ հասցէին կամ

Յ. Խ. ԽԷՐՊԷԿԵԱՆ,

535 ՈՒԷՍԹ 57րդ Փողոց, Ն. Ե.

Ց. ԹԱԳԱԳՃԵԱՆ ԵՒ Պ. ԵԹԱՐԵԱՆ

ՀԱՑԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ

Թիւ 242 Իսթ, 41րդ Փողոց

Պատիւ ունին ծանուցանել թէ, այս նոր ճաշարանն բացած են սա վստահութեամբ թէ մաքրութիւն և ընտիր խոհարարութիւն միշտ կը գտնուի հասարակութեան կողմէ։

Միանգամ փորձելն բաւական է մշտնջենաւոր յաճախորդ ըլլալու։

ԵԱՖ ՈՒՍԱՆԻ

Թիւ 52 Թրինիթի Փլէյս, Նիւ Եորք։

«Կրնամ ասել մեր գինիներուն համար, կոգալ մեր ամենայն գինեվաճառներուն մոտ, ինչ մը ժամանակ»։

EGYPTIAN KING CIGARETTES.

Ընդդէմ Եգիպտական Ցեղի Ծխախոտի Գիկարէթներու Թրքական դեղ մը կազմելով՝ Եգիպտական ծխախոտ չունի։

Մեր սիգարէթներուն համար, որք զուտ Եգիպտական ծխախոտէ շինուած են։ Միանգամ փորձելն բաւական է մեայուն յաճախորդ ըլլալու համար։ Կը վաճառուի ամէն տեղ։ Կեդրոնատեղին է 52 Թրինիթի Փլէյս, Պաթըրի Փառքին մօտ։

— Մի՛ մոռանաք անունը. Էֆիֆէնտի Քինկ Սիկըրէթս։ —